

Նարինե ՄԱՆՈՒԿՅԱՆ  
Երևանի պետական համալսարան

ԿԱՆԽԱՎԱՐԿԱԾԸ ՈՐՊԵՍ  
ՎԵՐԱՆՎԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ  
ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՆԵՐԻՄԱՍՏ

Սույն հոդվածում քննության են առնվում երկխոսության մեջ կանխավարկածի դիրավորյալ և ոչ դիրավորյալ դրսևորման առանձնահատկությունները: Ուսումնասիրության հիմքում ընկած են վերանվանական հարաբերությունները՝ որպես կանխավարկածի փարբերական հիմնական չափորոշիչներ: Կանխավարկածն ամրագրված է լեզվի կառուցվածքում, ուստի առնչվում է զուտ բառային միավորների ոլորտին և հայտնի է յուրաքանչյուրին: Հատուկ ուշադրություն է դարձվում նախադասության որևէ անդամի՝ որոշակի ընգծումով՝ շեշտադրմամբ կամ առոգանությամբ արտասանությանը, ըստ այդմ էլ փոխյալ անդամը կարելի է համարել նախադասության դիրավորություն արտահայտող կանխավարկած: Այսինքն, խոսողի սուբյեկտիվ մտրեցման միջոցով է նախադասության այս կամ այն անդամը որակավորվում որպես փոխյալ ասույթի կանխավարկած և արտահայտում կանխամտածված ներիմաստ:

**Բանալի բառեր.** կանխավարկած, վերանունություն, վերանվանական հարաբերություններ, երկխոսություն, կանխամտածված ներիմաստ, ոչ կանխամտածված ներիմաստ, խոսքային մտադրություններ, բառային միավոր, լեզվական միավոր

Կանխավարկածը (entailment) ներակայման տեսակ է, իմաստային միավորների և երկու իրողությունների միջև եղած հարաբերություն, որն ընկալվում է տրամաբանությամբ: Հարաբերությունները վերագրվում են նախադասությունների միջև այնպիսի պայմանականություններին, երբ երկրորդ նախադասության ճշմարտացիությունը անմիջականորեն բխում է առաջինից /Lyons, 1977: 85; Crystal, 1998: 136; Renkema, 2004: 136; Meyer, 2005: 174; Denham & Lobeck, 2009: 325; Verschueren & Ostman, 2009: 141/: Այսինքն, երկրորդ նախադասությունը բխում է առաջինից և, ինչպես կտեսնենք օրինակում, ինքնըստինքյան ընկալվում է որպես «դասակարգում»:

- A. If fifteen *cows* are browsing on a hillside, how many of them eats with their heads pointed the same direction?
- B. The whole fifteen.
- A. You have lived in the country. (Twain, 78)


Վերոնշյալ օրինակում *տասնհինգ կովեր արածում են*՝ fifteen *cows* are browsing արտահայտությունը ենթադրում է, որ *տասնհինգ կենդանիներ են արածում*՝ fifteen *animals* are browsing, ուստի առաջին նախադասության ժխտման դեպքում ինքնաբերաբար ժխտվում է նաև երկրորդը՝ If fifteen *cows* are not browsing, it means fifteen *animals* are not browsing either:

Բացի այդ, օրինակում գործածված յուրաքանչյուր բառ ինքնին ենթադրում է որևէ դասակարգում: Եթե կանխամտածված շեշտը դրվի միայն are browsing արտահայտության վրա, նույն սկզբունքով կարելի է ենթադրել, որ fifteen *cows* are browsing կամ fifteen *cows* are eating, կամ fifteen *cows* are not browsing, հետևաբար՝ fifteen *cows* are not eating: Վերանվանական դասակարգումը շարունակելով՝ կարելի է անդրադառնալ նաև animal-browsing և man-eating իմաստային դաշտի ճանաչմանը:

Հարկ է նշել, որ վերանունությունը (hyponymy) համարվում է կանխավարկածի տարբերակման հիմնական չափորոշիչը: Յուրաքանչյուր բառ լսելիս կամ արտաբերելիս՝ առաջին պատկերացումները, որ անցնում են խոսակիցների մտքով, առնչվում են այդ բառի՝ համապատասխան բառաշարում ունեցած տեղին, դիրքին և տարբերակիչ առանձնահատկություններին, որոնց շնորհիվ յուրաքանչյուր լեզվական միավոր իր ուրույն տեղն ունի տեսակային խմբում: Այսինքն, կանխավարկածի ընկալումն անմիջական կապ ունի այն իմաստային դաշտի ճանաչման և ընկալման հետ, որտեղ գործում է տվյալ բառը: Եթե առաջնորդվենք այս սկզբունքով, կանխավարկածի հարաբերությունն ամրագրված է լեզվի կառուցվածքում, այսինքն, այն առնչվում է զուտ բառային միավորների ոլորտին և հայտնի է յուրաքանչյուրին: Ուստի, կարելի է ասել, որ կանխավարկածի հիմնական աղբյուրը լեզվական միավորների միջև վերանվանական հարաբերություններն են /Palmer, 1981: 87; Cruse, 1986: 91; Lyons, 1995: 127; Croft & Cruse, 2004: 143; Meyer, 2005: 174; Denham & Lobeck, 2009: 325/, որոնք ամրագրված են յուրաքանչյուրիս գիտակցության մեջ:

- A. Can I have some more *beer*?
- B. You know where it is. (Baldwin, 28)

Գարեջուր՝ beer բառի ցանկացած կիրառում յուրաքանչյուրս ընկալում ենք ընդհանուր առմամբ որպես սննդային միավոր, որն ըմպելիք է, հետևաբար հեղուկ է, ալկոհոլ, ոչ քաղցր և այլն: Մեր ընկալումը տվյալ լեզվական միավորի արտահայտած կանխավարկածն է, որը նույնանում է նրա վերանվանական հասկացույթի հետ:



Ֆ. Ռ. Պալմերը առաջ է քաշում որոշակի անհերքելի լեզվական միավորների առկայության մասին փաստարկը, ըստ որի, եթե կանխավարկածի դեպքում մի դրույթը պայմանավորված է մյուսով, ապա բոլոր հնարավոր դեպքերում, եթե այդ դրույթը ճիշտ է, ապա հետևաբար նաև մյուսն է ճիշտ /Palmer, 1988: 203/: Այսինքն, կանխավարկածի առկայությունն անմիջականորեն կապված է լեզվական միավորների՝ անձի գիտակցության մեջ ամրագրված կարծրատիպային բովանդակություններով, երբ բառիմաստն արդեն իսկ ներառում է տվյալ վերաբերյալի էության մասին որոշակի տեղեկություն: Այն անձի գիտելիքի և տրամաբանության առանցքային կարգն է, քանի որ հանդիսանում է իրեն շախկապված և իրենից բխող մյուս գիտելիքների և տրամաբանական հարաբերությունների՝ համարժեքության և հակասության հիմքը: Նման լեզվական միավորները ենթադրում են կանխավարկած, որի իսկությունը փոփոխության ենթակա չէ բոլոր այն դեպքերի համար, երբ բառն օգտագործվում է առանց փոխաբերությունների, իր ուղղակի՝ բառարանային իմաստով:

- A. You think I am some kind of unnatural *mother*?
- B. What? No, wait a minute.
- A. You are not going to give me another thought, are you, now you know I've *got a kid*. (Tyler, 116)

Ցանկացած իրականության մեջ *mother* լեզվական միավորը, գործածվելով իր ուղղակի իմաստով, արտահայտում է այն հասկացությունը, որ մայր կարող է կոչվել նա, ով երեխա է լույս աշխարհ բերել, ով պետք է բացառապես իգական սեռի ներկայացուցիչ լինի, ով իր կենսաբանական կարգավիճակով կին է, և որ մայրանալու համար մոտավոր հավանական սահմանափակ տարիք և ֆիզիոլոգիական հասունացման և զարգացման շրջան գոյություն ունի: Այսպիսով, *mother* բառը կրում է միևնույն կանխավարկածը՝ *Mother is a female, who is a woman, an adult, who has given or is going to give a birth to someone* և այլն: Ուստի, ցանկացած համատեքստում, որտեղ այն կիրառվում է ուղղակի իմաստով, այն անձը, ում մայր են կոչում, պետք է համապատասխանի վերոնշյալ բնութագրիչներին: Չենք

կարող ասել, որ որևէ մեկը մայր է, սակայն չունի երեխա, տղամարդ է, տարիքային առումով որևէ սահմանափակում չունի և այլն:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ յուրաքանչյուր լեզվական միավոր ունի իրեն հատուկ բնութագրիչներ և որոշակի վերանվանական դասակարգում լեզվի բառաշարային համակարգում՝ կարծում ենք, որ միևնույն նախադասությունը կարող է ունենալ ավելի քան մեկ կանխավարկած, քանի որ նախադասության յուրաքանչյուր անդամ, որպես լեզվական միավոր, ունի իր կանխավարկածը: Այսինքն, նախադասության գլխավոր և երկրորդական անդամներից ցանկացածը, որպես որոշակի գործառույթ ունեցող բառ կամ խոսքի մաս, կարող է հանդես գալ որպես կանխավարկած, քանի որ յուրաքանչյուր լեզվական միավոր ունի տարբերակիչ բնութագրիչներ, որոնք ամրագրված են տվյալ լեզվին ծանոթ յուրաքանչյուրի գիտակցության մեջ:

Մեր կատարած դիտարկումների արդյունքում եկել ենք այն հետևության, որ կանխավարկածը ներմաստի այն տեսակն է, որտեղ համեմատաբար քիչ են դիտավորությունները, իսկ նախադասության այն անդամը, որը տվյալ կառուցում «աչքի է ընկնում» որպես կանխամտածված կանխավարկած, սովորաբար արտաբերվում է որոշակի շեշտադրմամբ և առոգանությամբ: Այսպիսի դիտավորությունը հուշում է խոսողի այնպիսի խոսքային մտադրությունների մասին, որոնք արտակա կառույցին ներակա միջոցներով լրացուցիչ իմաստային նրբերանգներ են հաղորդում:

Ջ. Յուլը կանխավարկածը տեսակների է բաժանում՝ ըստ նախադասության մեջ իրենց ունեցած դիրքերի /Yule, 1996: 33/: Այսինքն, հաշվի են առնվում տվյալ լեզվի կառուցվածքային առանձնահատկությունները՝ նախադասության անդամների կանոնակարգված հաջորդականությունը: Այս սկզբունքի հիման վրա էլ Ջ. Յուլը տարբերակում է կանխավարկածի երկու տեսակներ՝

1. **Ետնահենքային կանխավարկած** (background entailment)

- A. Let's see the *heel*.
- B. What? What do you call it. (Tyler 108)

Վերոնշյալ օրինակում, և առհասարակ անգլերեն լեզվում, նախադասության խնդիրը սովորաբար գտնվում է ստորոգյալից հետո: Ուստի, եթե խնդիրն ընդունենք որպես կանխավարկած, այն կհամարվի ետնահենքային կանխավարկած:

2. **Առաջնահենքային կանխավարկած** (foreground entailment)

- A. Did *you* ever see me?
- B. *Muriel* did. (Tyler, 100)

Անգլերենում առաջնահենքային կանխավարկածի օրինակ է նախադասության ենթական, որը հիմնականում տեղակայվում է ասույթի

սկզբում՝ այսպիսով՝ որպես կանխավարկած համարվելով առաջնահենքային:

Ջ. Ֆինքն իրավացիորեն նկատում է, որ Ջ. Յուլը, կանխավարկածները խմբավորելով ըստ նախադասության մեջ նրանց ունեցած դիրքի, չի անդրադառնում նախադասության շարահյուսական կառուցվածքի որոշ առանձնահատկությունների, քանի որ կրավորական կառույցների դեպքում առաջարկված հերթակայությունը խախտվում է /Finch, 2000: 164/:

- A. There is one thing good about all this. The wood in front of us is likely clear.
- B. The ebb has made a good while; *our stores should be uncovered*. Volunteers to go and bring in pork. (Stevenson, 113)

Տվյալ կրավորական կառույցը ներգործական կառույց դարձնելու դեպքում նախադասության ենթական՝ stores, կդառնա նախադասության խնդիրը՝ They/We should uncover the stores:

Կարծում ենք, դիտավորության առկայության դեպքում կրավորական կառույցների ընտրությունը պատահական չէ: Այս կերպ օրինակում ավելի շատ կարևորվում է այն փաստը, որ տարածքները պետք է մաքրվեն անտառածածկույթից, քան այն, թե ովքեր դա կանեն: Այսինքն, երկխոսության ժամանակ, ըստ հաղորդվող տեղեկատվության կարևորության և խոսքի օգտագործման նպատակի, խոսողն է որոշում, նախադասության որ անդամն ընդգծել որպես տվյալ նախադասության կանխավարկած, ուստի, կարելի է ասել, որ նման դեպքերում կարևորվում է խոսքն արտաբերողի գործոնը և նրա խոսքային մտադրություններն ու դիտավորությունները:

Կանխավարկածի դիտարկման շրջանակներում, կարևոր է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ նախադասությունների միջև կանխավարկածի հարաբերությունը միակողմանի է: Եթե մի դրույթ յուրաքանչյուր գործածման դեպքում ենթադրում է մեկ այլ դրույթ, դա չի նշանակում, որ երկրորդ դրույթի յուրաքանչյուր կիրառություն նույնպես ենթադրում է առաջինի առկայությունը /Lyons, 1977: 180/: Այսինքն, եթե որևէ x երկույթ հանդիսանում է մյուսի՝ y -ի հետևանքը, ամենևին էլ չի նշանակում, որ տվյալ հետևանքի՝ x-ի առկայության պատճառը հենց y-ն է:

- A. It weren't the grounding that didn't keep us back but a little. We blowed out a cylinder head.
- B. Good gracious! Anybody hurt?
- A. No'm. *Killed a nigger*. (Twain, 282)

Ուղղակի իմաստով ցանկացած գործածման ժամանակ *սպանել*՝ kill բառն իր մեջ ամփոփում է այն կանխավարկածը, որ նա, ում սպանել են, մահացել է՝ If a nigger was killed, he died: Այնուամենայնիվ, սա չի նշանակում, որ սևականը մահացել է՝ a nigger died ասույթը համապատասխան

նաբար ենթադրում է, որ սևականի մահվան պատճառն անպայման պետք է սպանությունը լինի՝ If a nigger died, he was killed: Տվյալ օրինակում նաև no'm, killed a nigger պատասխանն ունի ներիմաստ, քանի որ ցույց է տալիս խոսողի անմարդկային և խտրական վերաբերմունքը սևականների նկատմամբ, ինչն էլ, վերանվանական տեսանկյունից դիտարկելիս, ենթադրում է խոսողի կողմից այլ՝ սուբյեկտիվ դասակարգում ներիմաստից ընկալելի, սակայն փոխաբերություն արտահայտող վերանվանական խմբում:

Այսպիսով, կանխավարկածները դիտարկելով խոսքում դիտավորյալ և ոչ դիտավորյալ արտահայտման տեսանկյունից, կարծում ենք, որ միայն խոսողի սուբյեկտիվ մոտեցումն է նախադասության այս կամ այն անդամը «դարձնում» տվյալ ասույթի կանխամտածված կամ ոչ կանխամտածված կանխավարկածը: Այսինքն, եթե խոսողը նախադասության ցանկացած անդամ միտումնավոր արտասանում է որոշակի ընգծումով՝ շեշտադրմամբ կամ առոգանությամբ, տվյալ անդամը կարելի է համարել նախադասության դիտավորություն արտահայտող կանխավարկած, որը պայմանականորեն կանվանենք *կանխամտածված կանխավարկած*, իսկ նախադասության մյուս անդամների այն բնութագրիչները, որոնք լսելով՝ խոսակիցները դրանց լեզվական նշաններից ընկալում են որոշակի հասկացություններ և պատկերացնում դրանց տեղն ու դերը շրջակա միջավայրում, կարելի է անվանել *բառիմաստային կամ ոչ կանխամտածված կանխավարկածներ*: Քանի որ յուրաքանչյուր խոսք ունի որոշակի ուղերձ, հիմնական իմաստն արտահայտելու համար գործածված առանցքային բառն էլ յուրաքանչյուր արտաբերված նախադասության կանխամտածված կանխավարկածն է:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Croft W., Cruse D. A. Cognitive Linguistics. Cambridge: Cambridge University Press, 2004.
2. Cruse D. A. Lexical Semantics. Cambridge: Cambridge University Press, 1986.
3. Crystal D. The Cambridge Encyclopedia of the English Language. Cambridge: Cambridge University Press, 1998.
4. Denham K., Lobeck A. C. Linguistics for Everyone: an Introduction. Boston: Cengage Learning, 2009.
5. Finch G. Linguistic Terms and Concepts. London: Palgrave Macmillan, 2000.
6. Lyons J. Semantics. Cambridge: Cambridge University Press, 1977.
7. Lyons J. Linguistic Semantics: an Introduction. Cambridge: Cambridge University Press, 1995.
8. Meyer P.G. Synchronic English Linguistics: an Introduction. 3<sup>rd</sup> edition. Berlin: Gunter Narr Verlag, 2005.

9. Palmer F.R. Semantics. Cambridge: Cambridge University Press, 1981.
10. Palmer F.R. Semantics (2<sup>nd</sup> ed.). Cambridge: Cambridge University Press, 1988.
11. Renkema J. Introduction to Discourse Studies. USA: John Benjamins Publishing, 2004.
12. Verschueren J., Ostman J.O. Key Notions for Pragmatics. USA: John Benjamins Publishing, 2009.
13. Yule G. Pragmatics. Oxford: Oxford University Press, 1996.
14. Baldwin J. Another Country. New York: Dell Publishing Co., 1962.
15. Stevenson R.L. Treasure Island. USA: A Signet Classic, 1981.
16. Twain M. The Adventures of Huckleberry Finn. New York: An Apple Paperback, 1989.
17. Tyler A. The Accidental Tourist. New York: Berkley Books, 1978.

**Н. МАНУКЯН – «Логическое следование» как гипонимическое выявление имплицитности.** – Целью данной статьи является изучение гипонимии как способа выявления имплицитности в английском диалоге. «Логическое следование» рассматривается как один из видов имплицитности, которая имеет разные способы выражения. В статье также выявляются методы выявления имплицитности в диалоге, где важную роль играют ударение, интонация и фактор субъективности в речи.

**Ключевые слова:** логическое следование, гипонимия, гипонимические отношения, диалог, преднамеренная имплицитность, непреднамеренная имплицитность, вербальное намерение, лексема, лингвистическая единица

**N. MANUKYAN – Entailment as a Hyponymy-Based Type Implicitness.** – The aim of the present paper is the study of expressive features of entailments from the point of view of intentionality and unintentionality in dialogue. Entailment refers to the sphere of lexical units and its hyponymic classification is known to everyone. Hyponymic relations are considered to be the main criteria for identification of entailment. Special attention is paid to intonation and emphasis that make a lexeme/lexemes intentionally expressed entailment of a sentence. Also an attempt is made to comprehend and point out the motives of the speaker for expressing intentional implicitness in speech.

**Key words:** entailment, hyponymy, hyponymic relations, dialogue, intentional implicitness, unintentional implicitness, verbal intentions, lexeme, linguistic unit